

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2015թ. սեպտեմբերի 1-ին ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած «ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ԵԱՏՄ-ն անդամակցելու շրջանակներում ՀՀ-ը տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին» համաձայնագրի նպատակների իրագործման նկատմամբ հսկողության և ՀՀ գործադիր իշխանության մարմինների փոխգործակցությունը համակարգելու նպատակով ստեղծված հատուկ աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 7-ին ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Վիեննայում կայացած Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների հարցերով ՄԱԿ երկրորդ համաժողովի ընդունած Վիեննայի հռչակագրի և գործողությունների ծրագրի իրականացման ուղղությամբ» նպատակով ստեղծված աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Պետական քաղաքականության, միգրացիայի և զարգացման միջև փոխհարաբերությունները Հայաստանում» խորագրով խորհրդատվական հանդիպմանը,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 9-ին ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շահբազյանը մասնակցել է ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Վիճակագրության խորհրդատվական կոմիտեի վիճակագրության արտաքին և փոխադարձ առևտրի գծով ենթակոմիտեի նիստին,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 11-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը և սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Վերարտադրողական և սեռական առողջության իրավունքների խախտումներ» խորագրով հանդիպում-քննարկմանը,

- ✓ 2015թ. սեպտեմբերի 15-ին ՀՀ ԱՎԾ թվով 33 աշխատակից մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի բացման արարողությանը,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 17-ին ՀՀ ԱՎԾ ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել է ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Վիճակագրության խորհրդատվական կոմիտեի ֆինանսների վիճակագրության գծով ենթակոմիտեի նիստին,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի եզրափակիչ շնորհանդեսին,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 29-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Լ. Պետրոսյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Վիճակագրության խորհրդատվական կոմիտեի 7-րդ նստաշրջանին,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 29-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Վ. Դավթյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Էլեկտրոնային Հայաստան» ծրագրի համաժողովին՝ նվիրված Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգային զարգացմանը,
- ✓ 2015թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխաթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար» ծրագիրն իրականացնելու համար արդյունքներն ամփոփելու նպատակով կլոր սեղան քննարկմանը,
- ✓ 2015թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ - ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի 14-րդ նիստի նախանիստին,
- ✓ 2015թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Վարդանյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հայաստանում ENPARD ծրագրի շրջանակներում Գործընկերների երկրորդ համաժողովին,

- ✓ 2015թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ - ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի 14-րդ նիստին,
- ✓ 2015թ. հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 18-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը, ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Կենտրոնական Ասիայի և Խաղաղ օվկիանոսի երկրների շրջակա միջավայրի տնտեսական հաշվառման համակարգ» խորագրով առցանց դասընթացին,
- ✓ 2015թ. հոկտեմբերի 30-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների պատճառների վերացմանն ուղղված պետական քաղաքականության տարրերը» խորագրով կլոր սեղան քննարկմանը: